ՆԱՄԱԿԱՆԵՐ

Խնբագրության «Արարատ» ամսագրի

Նոր-Նախիջևանի Առաջնորդական փոխանորդ Տ. Գէորգ վարդապետի տարույս մարտի 37-ի թ. 35 գրութեամբ Նոյն քաղաքի վաճառական մեծարգոյ պ. Յովհաննէս Միքայէլեան Զէյլարեանը ուղարկել էր մեր անունով, իբրև նուէր Մայր Տաճարի Իջման սեղանի բեմի ծածկոցի համար, երեսուն արշին մոյգ կարմիր մահուտ և Նոյն գոյնի մետաքէ ժապաւէն։ Իսկ բարեպաշտուհի Տիկին Եղիսաբէթ Բուզաղեանը նուիրաբերել է Գեր. Տ. Մատթէոս եպիսկոպոսի ձեռամբ Մայր Տաճարի զոհծածութեան համար մի փութ ընտիր կնդրուկ։

Ընդունելով այդ սրտաբուղխ նուէրները—ես իմ աղօթքներիս մէջ հայցեցի սուրբ Աստուած շնորհելու յարգելի նուիրատուներին երկար ու առողջ կեանք և բարեբաստիկ օրեր։ Իսկ Ներկայումս յայտնում եմ իմ ջերմ շնորհակալիքս թէ յարգելի նուիրատուներին, որոնք իրենց սրտին մօտ ընդունելով Մ. Տաճարը, մասնակից են եղել նրա բարեգործութեան և թէ Տ. Տ. Մատթէոս եպիսկոպոսին, Գէորգ վարդապետին և Գէորգ քահանայ Փելլէշահինեանին՝ որոնք իմ կողմից թարգմանեցին հանդիսացել յարգելի նուիրատուների մօտ։

Այս մասին ինդրում եմ յարգելի խմբագրութեանդ հրատարակել Արարատ ամսագրում։

Մայր Տաճարի Լուսաբարոյեան՝

† Վեռնդ եպիսկոպոս

Նորին Սրբութեան Վեհափառ Հայրապետի անցեալ Յունիսի 28-ի թ. 1117 մակագրութեան համաձայն ստացայ Մ. Աթոռի միաբան Գերաշնորհ Տ. Անանիա Արքեպիսկոպոսից Մայր Տաճարին նուիրաբերած իր սեպհական եկեղեցական զգեստները, մուծելով մուտք Տաճարի իրեղէնների ժապաւենում, քան այժմ.

1. Շուրջառ ապիտակ ատլաս արծաթաթել ծաղիկներով, սատակաձև արծաթեայ ոսկեզօծ ագրաներով մի հատ։
2. Հոդաթափ Նոյնպիսի կտորից մի զոյգ։

3. Փորուրաբ կարմիր ատլաս, արծաթաթել ծաղիկներով. մի հատ։
4. Բազպան նոյն տեսակի մի զոյգ։
5. Գոտի մետաքսեայ գործուած «Անանիա վարդապետ Հայաստանեանց» 1894 ամի, արծաթեայ չիւթիլի ոսկեզօծ ապխիւք, երեք հատուածից, նոյնպիսի արձանագրութեամբ, մի հատ։
6. Շապիկ գեղնագոյն բամբակեայ մի հատ։
7. Սրբիչ բամբակեայ մետաքսեայ ծաղիկներով մի հատ։
8. Խաչ արծաթեայ ոսկեզօծ, մի երեսին հինգ հատարակ կանաչ քարերով, միւս երեսին նոյնչափ մանիշակագոյն քարերով։ «Յիշատակ է ս. խաչս Անանիա վարդապետի Հայաստանեանց» 1888 ամի, մի հատ։
9. Շուրջառ ապխտակ արծաթեայ զոտ դիպակ Թուլատանի, նոյնպիսի գեղնագոյն խաչերով, արծաթեայ չիւթիլի ոսկեզօծ ապխիւրով արձանագրութեամբ. «Ընծայեցաւ Անանիա ս. եպիսկոպոսին հանգուցեալ Լիպիա Եգիպտացիանցի յիշատակին 1903 թ. Բազուս. մի հատ։
10. Փորուրաբ նոյնպիսի կտորից մի հատ։
11. Թևնոց, բազպան նոյնպիսի կտորից մի զոյգ։
12. Հոգաթաք նոյնպիսի կտորից մի զոյգ։
13. Եմիփորոն երկու հատ, մինը մետաքսեայ կարմիր ատլաս, գեղնագոյն մետաքսեայ ծաղիկներով, ապխտակ մետաքսեայ ատատով, շորս հատ ոսկեթել ասկղնագործ խաչիւ և հրեշտակաց պատկերով, շուրջ ոսկեթել երիզով, ծայր կրկնակի ոսկեթել ծոպերով, և միւսն կարմրաշուրթ մետաքսեայ ծաղիկներով և ապխտակ մետաքսեայ ատատով, շորս ոսկեթել ասեղնագործ խաչերով, շուրջն ոսկեթել երիզով և ոսկեթել կրկնակի ծոպերով, պատրաստուած Բազուայ ս. Լուսաւորիչ եկեղեցու արդեամբ, ձեռամբ գործակալ Մատթէոս վարդապետի (այժմ եպիսկոպոս)։ Արձանագրութեամբ. «Յիշատակ է Անանիա Եպիսկոպոսի Հայաստանեանց թեմակալ Առաջնորդին Շամախու վիճակի, միտրան Մ. Աթոռոյ ս. Էջմիածնի 1904 ամի։
14. Շուրջառ ապխտակ ատլաս, մետաքսեայ ծաղիկներով, ոսկեզօծ չիւթիլի ապխիւրով «Ի յիշ. Զամբաղ և Բազդ (Բազդասար). Փիրաղումների 1907 թ. մի հատ։
15. Շուրջառ մետաքսեայ ապխտակ բիպա ալէծածան ատղաձև արծաթեայ ապխիւրով «Յիշ. Տիրուհի Անանա Միրզաբէգեանցի, Սապրանի Սուրբ Աստուածածնա եկեղեցու (վանքին) 1913.» մի հատ։

16. Թենց. բազպան Նոյնպիսի կտորից մի զոյգ։

17. Զգեստաց կապոց մետաքսեայ կարմրաշուրթ ապիտակ ծաղիկներով և ապիտակ մետաքսեայ ատատով մի հատ։

18. Գաւազան փղոսկրեայ վիշտպազլուխ, արծաթեայ ոսկեզօծ բռաչիւ, երեք հատուածից, երեք հատ փղոսկրեայ գնտակով Նոյնպէս ծայրն փղոսկրեայ, հատուածիւ ատատֆեայ և մանրանկար կերտուածով։ առանձնաբեամբ է Եզիպտաց կաթուղիկոսի Անթափեցւոյ զատանի «Ե. Վ.» տառեր ատացեալ յեղրօրէ Եզիպտաց Արքեպիսկոպոսի Կարապետեանն։ մի հատ։

19. Մաշտոց ձեռնագրութեան շորս հատ, մինն կարմիր ատլաս երեսով, մինն ալ կլինկոր երեսով և երկու ևս մանրիշատպոյն թաւշեայ երեսով, որոց միսայն երկու երեսն արծաթեայ ոսկեզօծ բռաչիւք։ «Միշտատակ Նուոյի Արքեպիսկոպոսին Հանգուցեալ Առաջնորդին Եռամեայ»։

Յայտնելով Փերաշնորհ Տ. Անանիա Արքեպիսկոպոսին իմ Ջերմ շնորհակալութիւս այդ սրտաբուղխ նուէրներուն համար, խնդրում եմ յարգելի խմբագրութեանդ հրատարակել այս մասին «Արարատի» առաջիկայ համարում։

Մայր Տաճարի Լուսարարապետ՝

† Գեորգ Սարկաւագ։